

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «**Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին**» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են: Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ: «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո, կամ եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ին ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում,
3. «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
 Հասցե՝ Մ. Խորենացու փ. 15 ՀՀ, Երևան, 0010, «Էլիտ Պլազա» բլ. 7-րդ հարկ
 Հեռ.՝ (374 10) 58 23 21, 58 23 22
 Էլ հասցե՝ info@fsm.am
 Ֆաքս՝ (374 10) 58 24 21
 Կայք՝ www.fsm.am

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել ՀՀ կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ ՀՀ կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6
 Հեռ.՝ (374 10) 59 26 97
 Էլ հասցե՝ chairman@cba.am
 Ֆաքս՝ (374 10) 56 54 96
 Կայք՝ www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ի միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք «Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: